## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №: 1

## 02.03.2021 Թ. ԿՆՔՎԱԾ N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-2 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «11» « 03 » 2021 թ.

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, «Օրիոն 7» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ն. Սարգսյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.03.2021 թ կնքված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-2 պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել Պայմանագրով աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը համաձայն N: 1 Հավելվածի:

1.2 Հաստատել Պայմանագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն N: 2 Հավելվածի:

1.3 Պայմանագրի 2.4 կետը հաստատել հետևյալ խմբագրմամբ.

**« 2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 2021 թ. ոռոգման սեզոնի ավարտը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

2.4.3 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.4 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:»

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի N: 1 և N: 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 3 (երեք) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ | «Օրիոն 7» ՍՊԸ |
| Երևան, Վարդանանց փակուղի 8 | ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 27 շ, բն. 126 |
| Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ | «ԱԳՐԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621 | h/h 220453330684000, ՀՎՀՀ 00147538 |
| Տնօրեն | Տնօրեն |
| ------------------------ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ | ------------------------ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված № 1*
*02 մարտի 2021 թ. կնքված*
*N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-2 պայմանագրի*
*№ 1 համաձայնագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**ՋՐԱՅԻՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կատարողի կողմից կատարվող աշխատանքների առանձին փուլերի անվանումներ | Մատուցման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ազատի 2-րդ աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի 23 հատ D=720 մմ և 5 հատ D=820 մմ կոմպենսատորների ընթացիկ նորոգում | 10.03.2021 թ. | 22.03.2021 թ. |
| 2 | Մխչյանի 1-ին աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի 29 հատ D=1820 մմ և Մխչյանի 2-րդ աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի 12 հատ D=1820 մմ կոմպենսատորների ընթացիկ նորոգում | 23.03.2021 թ. | 05.04.2021 թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

------------------------------ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Օրիոն 7» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 27 շ, բն. 126
«ԱԳԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 220453330684000, ՀՎՀՀ 00147538
Տնօրեն

------------------------------ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ.

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*Հավելված № 2*
*02 մարտի 2021 թ. կնքված*
*N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-2 պայմանագրի*
*№ 1 համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավեր-ով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 2 | 45231124/502 | Մխչյանի 1-ին և 2-րդ աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի կոմպենսատորների ընթացիկ նորոգում | | | 1455000 | 3980000 | 3980000 | 3980000 | 3980000 | 3980000 | 3980000 | 3980000 | 3980000 | 3980000 | 3980000 |
| 3 | 45231124/503 | Ազատի 2-րդ աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի կոմպենսատորների ընթացիկ նորոգում | | | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 | 1840000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

------------------------------ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Օրիոն 7» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 27 շ, բն. 126
«ԱԳԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
հ/հ 220453330684000, ՀՎՀՀ 00147538
Տնօրեն

------------------------------ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*